

## ԳԼՈՒԽ ԻՎ ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄՔ

Մենք տեսանք Յովնան, որ տանիք է ի տանիս ցատկելով, ելնելով եւ իշնելով անհետացեր էր, բայց վերջապէս հասնելով անկեան գլուխ եւ հոն իւր նիզակին վրայ յեցեալ պտոյտ մ'ընելով իջաւ փողոց եւ տեսաւ խումբ մը հեծելագօր, որ կ'ուզար. հակառակ կողմը դառնալով սկսաւ խուսափել, բայց հագիւ թէ քանի մը քայլ առաւ եւ ահա դիմացեն նաեւ խումբ մը արաբացի խառնադանճ զինք դիմաւորեց. երկու սուրի մէջ մնալով Յովնան՝ էլ չի դարձաւ, իւր ընթացքը շարունակեց: Արաբացի խումբը նախ ուշադրութիւն չըրաւ իրեն, բայց վերջը մէկը յանկարծ սոսկմամբ ետ քաշուելով աղաղակեց թէ՝ «Ահա՛ թշնամեաց գլուխը», սա Շիրակայ դաշտին մէջ տեսեր էր զհովնան մօտեն եւ նորա երկաթի զօրութեան փորձն առած էր. ուստի հարիւրաւոր սուսերք վայրկենին մերկացան եւ շրջապատեցին «թշնամեաց գլուխը», որ նոյնպէս սուրը ձեռքը յարձակեցաւ ճամփայ բանալու իրեն, իւր կաշեայ վահանաւ քառասուն հարուած ի դերել հանելով եւ աջ ու ձախ կտտորելով կը յառաջեր անվեհեր: Եւ ահա սուրը խորտակեցաւ, արաբացի խմբին գլխաւորը, որ մինչեւ այն ատեն խոհեմութեամբ դիտեր էր, առաջ անցաւ եւ մուրճի հարուած մը տուաւ գլխուն, որ սաղաւարտը ջախջախեց եւ դէտին գլորեց զհովնան. փախստականները դարձան՝— վատերուն քաջութեան վայրկեանն էր այդ ինկած թշնամին սպաննել.— բայց Իպրահիմ զօրագլուխը իւր ահագին մուրճը ձեռքը կը սպառնար փշրել այն մարդուն գլուխը, որ մօտենար վնասելու թշնամուոյն, վասնզի իմացաւ թէ մրցանակը ողջ առողջ զնայ Բուղայի հասցնելու վրայ էր: Ուստի սաստիկ մաքառելով հագիւ կրցաւ ողջ պահել, մինչեւ ձիաւորաց օգնութիւն հասաւ: Յարուածին թմրութենէն սթափել էր Յովնան, երբ թշնամի ուսոց վրայ հասաւ ոստիկանին պալատը, եւ երբ հանեցին զինք Բուղայի առջեւ, եւ նա իւր խոր եւ մանր աչքրն ուղղեց նորա վրայ, որուն «թշնամեաց գլխաւոր» անունն կ'ուտային՝

— Ո՞վ ես դու, ի՞նչ է անունդ,— հարցուց: